ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

Լերմոնտովո համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16-ի նիստի.

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Իվան Բոլոտին, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյով, Վասիլի Կորոլյովը; Անտառաշեն բնակավայրի վարչական ղեկավար Ռաֆիկ Խառատյանը, համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը /N33/՝

1. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Քոչարյան

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Հարությունյան

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Գալուստյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ Արսեն Քոչարյանը: Նա ներկայացրեց Լերմոնտովո համայնքի 2025 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաշվետվությունը, որը համայնքի ավագանու անդամները ընդունեցին ի գիտություն:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N34/

2. **ԼՍԵՑԻՆ** - ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի քրտուղար Անահիտ Հարությունյանը: Նա բացատրեց փաստաթղթերի արխիվացման, պահպանման և օգտագործման անհրաժեշտությունը և ներկայացրեց նշված կարգը: Ավագանու անդամները քննարկեցին և տվեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N35/

3. **ԼՍԵՑԻՆ** - ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի տարածքում գտնվող այն հողամասերը, որոնք առաջարկվում են տրամադրել վարձակալության 25 տարի ժամկետով: Ավագանու անդամները քննարկեցին, սահմանեցին մեկնարկային գները և տվեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N36/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ՔՐԻՍՏԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

3.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ